XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ

Նելլի Հովսեփյան
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

XIX դարի հայ մտածողներն իրենց հայացքներում պետության ամենակարևոր կողմերից են համարել պետության կառավարման և կառուցման ձևի հարցերը: Հայ իրավական մտքի պատմության մեջ, օրինակ, Մ. Խորենացին, Ե. Կողբացին, Եղիշեն, Հ. Մայրավանեցին, Մ. Գոշը, Ս. Սպարապետը, Գլաձորի և Տաթևի համալսարանների մտածողները, Հ. Արղությանը, Հ. Լազարյանը և ուրիշներ պաշտպանել են պետության կառավարման միապետական ձևը, իսկ Ֆրիկը, Հ. Էմինը, Շ. Շահամիրյանը և ուրիշներ՝ պետության հանրապետական ձևը: Սակայն, անկախ այն հանգամանքից, թե ով կառավարման ինչպիսի ձև է գերադասել, բոլորն էլ միասնական են բռնապետության քննադատության և այն մերժելու հարցում: XIX դարում բռնապետության դեմ պայքարը առաջնային են համարել բոլոր հայ մտածողները անխտիր:

Հայ մտածողները, որքան էլ որ պետական կառավարման ձևերի վերաբերյալ չեն ունեցել արդի գիտական չափանիշներին համապատասխանող պատկերացումներ, սակայն նրանց գիտական ժառանգության մեջ այդ հարցերին վերաբերող առաջադիմական գաղափարներ են արծարծվել, որոնք կարևոր նշանակություն ունեն իրավական մտքի պատմության համար: Այսպես, Մ. Մամուրյանը, Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Մ. Տատյանը և ուրիշներն իրենց կարծիքներն են շարադրել միապետության, սահմանադրական միապետության, բռնապետության, ազնվապետության, օլիգարխիայի, բուրժուական հանրապետության և պետության այլ ձևերի մասին: «Տերությանց սահմանադրությունները չորս ընդհանուր ձև ունի՝ ինքնակալություն որոյ մեջ իշխանությունը մեկ անձի մը կըպատկանի, սակավապետություն (օլիգարխիա), որոյ մեջ քանի մը անձանց կը վերաբերի, ազնվապետություն՝ որոյ մեջ իշխանությունը ժառանգական իրավունքով ամենանշանավոր անձանց կվերաբերի, ռամկավարություն՝ որոյ մեջ իշխանությունը ազգին ամբողջությամբ կվերաբերվի»[1] ,- գրել է Հ. Սվաճյանը:

Մ. Մամուրյանը, հարցը քննարկելով պետության ձևերի պատմականության տեսանկյունից, ցույց է տվել, որ բոլոր պետությունները նույն ժամանակաշրջանում չեն կարող պետական նույն ձևերն ունենալ. օրինակ՝ Եվրոպայում պատմական նույն հատվածում միմյանց հարևան Անգլիայում սահմանադրական միապետություն էր, իսկ Գերմանիայում՝ բացարձակ միապետություն: Նման տարբերությունը նա բացատրում է այս պետությունների ներքին պայմաններով: Պետությունները «երկու գլխավոր ձևի կրնար վերածուիլ ... հանրապետության և միապետության»[2]: Նա հանրապետական ձևը բաժանել է երկու տիպի՝ հանրապետական, երբ ժողովուրդն է ղեկավարում, և հանրապետական, երբ ազնվականությունն է ղեկավարում: Ընդ որում, ազնվական հանրապետությունը նա բաժանում է ընտրովի ժառանգականի և աստվածապետականի: «Հանրապետությունը կրնայ լինել ռամկավարական, երբ

[1] «Արեւելեան մամուլ», 1881, հ. 6, էջ 213-214:
[2] Մամուրյան Մ., Հին պատմություն, հ. Ա, Կ.Պոլիս, 1884, էջ 29:

որ ամբողջ ժողովուրդը կվարե վեհապետության պաշտոնը: Ազնվապետությունը, երբ որ ժողովրդիան միայն մեկ մասին (մարմին) ... կմասնակցի: Ազնվապետականը, երբ ժողովուրդը մեկ մասով... կմասնակցի: Ազնվապետությունն ընտրական է, երբ ժողովուրդն ազնվական դասէն կընտրէ իր ներկայացուցիչները, այսինքն՝ այն մարդիկն, որոնց կյանձնէ վեհապետությունը: Ազնվապետությունը ժառանգական է, երբ իշխանության իրավունքը իբրև երկնատուր որդվոց որդու կավանդուի առանց ազգին հավանության: Աստվածապետական կառավարության տեսակ մէ ազնվապետական հանրապետությունը, որու մեջ կրոնավորները յանուն Աստուծոյ կիշխեն ժողովուրդյան վրայ»[1]: Մ. Մամուրյանը գիտական բացատրություն է տալիս միապետության կամ ինքնակալության կառավարման ձևի մասին՝ նշելով, որ նման պետությունում գերագույն իշխանությունը միապետի ձեռքում է: Նա կարծիքներ է հայտնել նաև բռնապետության կամ անսահմանափակ միապետության մասին. «Միապետության մեջ երեք իշխանությունները քիչ թե շատ միևնույն մարդուն ձեռքին են: Եթե միապետը միանգամայն վեհապետ է ... այն ատէն միապետությունը բաձարձակ կամ բռնական է..., եթե միապետը ուրիշ անձերու հետ կբաժանէ երեք իշխանությունները այն ատէն միապետությունը բարեխառն կըսվի: Ամենեն բարեխառն միապետությունը երեսփոխանական կամ սահմանադրական կառավարություն ըսվածն է»[2]:

Մ. Տատյանը, անդրադառնալով պետությունների զարգացման ձևերին, խոսել է ֆեոդալիզմի և բուրժուազիայի տիրապետության ժամանակաշրջանի պետությունների մասին՝ ասելով, որ ֆեոդալական իրավակարգի ժամանակ հիմնական ձև են եղել միապետությունը և բռնապետությունը, իսկ բուրժուազիայի ժամանակ՝ միայն սահմանադրական միապետությունը, որը ֆեոդալական և բուրժուական դասակարգերի փոխզիջման հետևանք է: Եթե միապետության պայմաններում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը թելադրում է միապետը, ապա սահմանադրականում՝ նաև ներկայացուցչական մարմինը: Այս հայացքները շարադրելիս նա հանդես է եկել նաև բռնապետության, եկեղեցական դոգմաների և կամայականությունների դեմ:

«Բազմավեպը» դեռևս 1848 թ, քննության ենթարկելով պետության կառավարման ձևերի հարցը, նշում է, որ աշխարհի տարբեր պետություններում գոյություն ունեն կառավարման տարբեր ձևեր, «Ամենայն ընկերութիւն պէտք է գիտնայ թէ իր մէջ գերագոյն իշխանը ո՛վ է. ապա թէ՞ որ, ընկերութիւն չըլլար ու չմնար. միայն աս կայ որ գերագոյն իշխանութիւնը ամէն ժամանակ ու ամէն ազգաց մէջ միակերպ չէ, հապա ո՛րը միապետական է, ո՛րը ազնուապետական, որն ալ ռամկապետական»[3]: Հոդվածագիրը իրավաբանական բացատրություն է տալիս կառավարման ձևերին. «Երբոր տէրութեան մը կառավարութիւնը մէկ մարդու ձեռքն է, անոր գերագոյն իշխանութիւնը միապետական կ'ըսու. երբոր ազգի մը մէջէն ընտրուած ազնուականներուն յանձնուած է, կ'ըսուի ազնուապետական. իսկ երբ ժողովրդեան կամ ռամկին ձեռքն է՝ ռամկապետական»[4]: Ըստ հեղինակի՝ միապետականը կարող է դառնալ բռնապետական այն դեպքում, երբ չեն գործում օրենքները, չեն պահպանվում կարգ ու կանոնը, երբ միապետը ձեռք է բերում անսահմանափակ իրավունքներ: Ժամանակի պայմանների թելադրանքով, երբ միապետը չի կարող իրականացնել իր գոր-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 29-30:
[3] «Բազմավեպ», 1848, մարտ, էջ 66:
[4] Նույն տեղում:

ծառույթները, պետությունը դառնում է սահմանադրական. «Աս գերագոյն իշխանութիւներուն առաջինը գէշ կերպով գործածուի նէ, բռնակալութիւն կը դառնայ, երկրորդը սակաւապետութիւն, երրորդը անիշխանութիւն»[1]:

Անհայտ հոդվածագիրը նույն հոդվածում փորձ է կատարել ցույց տալ Եվրոպայում սահմանադրական միապետության առաջացման պատճառները, բայց չի կարողացել խորությամբ ուսումնասիրել անգլիական սահմանադրական միապետության իրական պատճառները: Ինչպես հայտնի է, Անգլիայում ֆեոդալները և բուրժուազիան չկարողացան լուծել իշխանության հարցը նախ այն պատճառով, որ ֆեոդալները ուժ չունեին իշխանությունն իրենց ձեռքերում պահելու, այնուհետև՝ բուրժուազիան չուներ այն հզորությունը, որ խլեր իշխանությունը ազնվականներից: Այդպիսի պայմաններում, ելնելով ազգի շահերից, ազնվականները և բուրժուազիան փոխզիջման ճանապարհով ստեղծեցին սահմանադրական միապետություն կամ կիսաֆեոդալական կամ կիսաբուրժուական պետություն: «Եւրոպայի հիմակուան ազգերը աս զեղծմունքներէն վախնալով՝ նայեցան որ մէկ տեսակը մէկալ տեսակներով բարեխառնեն, այսինքն մէկուն պակասութիւնները մէկալին կատարելութիւններովը բաղադրեն. ասանկ ձևացան ու հետզհետէ կը ձևանան խառն կամ սահմանադրական կառավարութիւն ըսուածները ...»[2] -նկատում է հեղինակը: Այնուհետև նա, ելնելով XIX դարի սկզբին ստեղծված տնտեսական և քաղաքական իրավիճակից, հանգել է այն եզրակացության, որ եվրոպական շատ երկրներում կստեղծվեն «... կառավարութիւնները ոչ պարզ միապետական, ոչ պարզ ազնուապետական և ոչ պարզ ռամկապետական ձևերով» [3]:

Կղերապահպանողական հոսանքի «Նոր-դար» թերթը, մասնավորապես նրա խմբագիր, իրավագիտության դոկտոր Սպանդար Սպանդարյանը 1880-ական թթ., անդրադառնալով պետությունների կառավարման ձևին, լուրջ ուշադրություն է դարձրել սահմանադրական միապետության իրավաբանական վերլուծությանը: Բազմաթիվ հոդվածներում, մասնավորապես խմբագրական հոդվածներում, հեղինակը ցույց է տվել, որ սահմանադրական միապետությունում թագավորի կամ միապետի իշխանությունը սահմանափակվում է ներկայացուցչական մարմնով, նրա կողմից ընդունված օրենքով: Ըստ հեղինակի՝ սահմանադրական միապետությունը որպես կանոն հանդես է գալիս բուրժուազիայի ժամանակ և նրա իշխանության հաստատմամբ. «Պէտք է ասենք, որ սահմանադրական պետութիւնների մէջ պետութիւնը պահպանվում և կառավարվում է մի օրէնսդիր մարմնով, որին անուանում են պարլամենտ: Այդ պարլամենտը բաղկացած է երկու առանձին ժողովքից, որոնք իւրաքանչիւր պետութեան պատմական և քաղաքական կեանքից առաջացած յատուկ հիմնական օրէնքներով միմեանց հետ որոշ յարաբերութեան և սահմանների մէջ են դրուած և որոշ անուններ են կրում»[4]: Ս. Սպանդարյանը ցույց է տալիս, որ արտոնյալ դասակարգերից ստեղծված վերին պալատը կոչված է պաշտպանելու տնտեսապես և քաղաքականապես տիրող դասակարգերի շահերը: Հեղինակը նաև խոսում է պալատի ձևավորման եղանակի կամ ձևի մասին: «Ամեն սահմանադրական պետությիւնների մէջ առաջին ժողովների անդամները երկրի բարձր ազնուական ... արտօնութիւններ վայելող դասից են, որոնք ժողովրդից չեն ընտրվում, այլ ժառան-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 67:
[3] Նույն տեղում:
[4] «Նոր-Դար», 1884, 11 հոկտեմբերի, էջ 163:

գական իրաւունքով պետութեան գլխից են նշանակվում … մինչ ցմահ»[1]: Ըստ հեղինակի՝ ստորին պալատի պատգամավորներն ընտրվում են ժողովրդի կողմից՝ որոշ ժամանակաշրջանով, ընդ որում՝ օժտված ձևական իրավունքներով նույնիսկ օրինագծերը քննության ենթարկելու և ընդունելու ընթացքում: «Սահմանադրական պետութեան մէջ իւրաքանչիւր օրինագիծ պէտք է ուրեմն անցնի պարլամենտի այդ երկու ժողովների միջից, սկսելով պատգամաւորների ժողովից: Պատահում է, որ այն օրինագիծը, որին պատգամաւորների ժողովն իւր հաւանութիւնը տուել է, միւս բարձր ժողովը (մէկ տեղ՝ լորդերի տունը, միւս տեղ՝ սենատը …) մերժում է … այսպիսով օրինագիծը օրէնքի ոյժ չէ ստանում, որովհետև օրինագիծը այն ժամանակ միայն օրէնքի ոյժ է ստանում, երբ պարլամենտի երկու ժողովից էլ ընդունվում է»[2]- նշում է նա: Լինելով պահպանողական՝ այնուամենայնիվ ցարական Ռուսաստանի պայմաններում Սպանդարյանը քննադատական խոսք է հրապարակում տիրող դասակարգերի շահերն արտահայտող պալատի մասին. «Երկու ժողովների մէջ ծագած տարաձայնութեան ժամանակ իրեն վիրաւորուած և բռնաբարուած համարողը միշտ պատգամաւորների ժողովն է: Նախ, որ օրինագիծը սրանից է գնում միւս ժողովը, երկրորդ, որ պատգամաւորների ժողովը, իրեն ճանաչելով ժողովրդի կամքի ուղիղ ներկայացուցիչն … պնդում է, որ բարձր ժողովը նրա ընդունածը ինքն էլ պէտք է ընդունէ, քանի որ այդ բարձր ժողովը իսկապէս ժողովրդեան կամքը չէ ներկայացնում, այլ մի որոշ դասի կամքը»[3]: Նման վիճակը վերացնելու և արդարություն հաստատելու, հատկապես ժողովրդական պալատներին տեղ տալու համար Ս. Սպանդարյանն առաջարկում է ընդլայնել ժողովրդի ընտրական իրավունքը. «Որպէս զի դրանց (լորդերի, սենատի) ազդեցութիւնը պակասի և ժողովրդի կամքը աւելի ուժով երևան գայ, պէտք է, որ ժողովրդի ընտրութեան իրաւունքը ընդարձակուի այլապէս՝ պետութիւնում պատգամաւորների ժողովի ընտրութեան մէջ ժողովրդի, նրա դասակարգերի աւելի մեծ մասը իրաւունք ստայ ընտրութեանը, ուրեմն և անուղղակի երկրի կառավարութեանը մասնակցելու»[4]:

Ինչպես հայտնի է, առաջին պրոլետարական հեղափոխության միջոցով ստեղծված և1871 թ. մարտի 18-ից մինչև մայիսի 28-ը գոյատևած Փարիզի կոմունան պատմության մեջ հայտնի է որպես աշխատավորության կամ բանվոր դասակարգի առաջին կառավարություն: Մ. Մամուրյանը 1871 թ. ապրիլի սկզբներից տպագրել է հոդվածներ՝ նվիրված Փարիզի կոմունային, նրա ներքին և արտաքին քաղաքականությանը, պետական մարմինների ձևավորմանը և գործունեությանը, իրավական ակտերին, ընտրելու իրավունքին, պաշտոնավորների առաջադրմանը և նշանակմանը: «Ընկերային հաստատութիւն մ'է հասարկուրդն, հետևապէս մարդկային ընկերութեան չափ հին և ամէն կառավարութեանց պարզագոյն ձևն է: Իր շրջանին մէջ՝ հասարակուրդն անկախ կ'գործէ, իր մասնաւոր շահերուն վրայ կ'հսկէ, իր յատուկ կեանքն և վարչութիւնն ունի: Ինքն իր ծոցէն կ'կազմէ իր ընդհանուր երեսփոխանական խորհուրդը, կ'սահմանէ գործադիր պաշտօնեաներն՝ և ներքին վարչութեան իւրաքանչիւր ճիւղին համար ունի հասարակապետ, դատաւոր, մատակարար, որոնք հասարակուրդին տնտեսական, դատաստանական, եկմտանական, կրթութեան գործերուն կ'հսկեն և մանրանկար հասարակապետութեան մը պատկերը կ'ընծա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

յեն»[1],-գրել է Մամուրյանը: Նա այն կարծիքն է հայտնել, որ Փարիզի կոմունան մարդկանց համար ստեղծել է ազատ, իրավահավասար հարաբերություններ հատկապես տեղական ինքնակառավարման բնագավառում: Մամուրյանը, կոմունան համեմատելով ժամանակի բուրժուակալվածատիրական պետությունների հետ, տեսնում է այն տարբերությունը, որը օգտակար է ժողովրդի համար: Կոմունայի պետական մարմիններում ժողովրդի շահերը բարձր են ամեն ինչից: Այդ պատճառով էլ, գրել է հայ հեղինակը, Փարիզի կոմունայում հանդես են գալիս հասարակության ղեկավարման գործում նոր, մինչև այժմ մեզ անհայտ մեթոդներով, այսինքն՝ կրոնից անկախ պետություն կամ կրթության, տնտեսության հարցերով զբաղվող պետական մարմիններ, պաշտոնավորներին նշանակող և հսկող հանձնաժողովներ: Մամուրյանը թուրքական բարբարոս պետության պայմաններում անարգանքի սույնին է գամում գերմանական, անգլիական և մյուս պետություններին, որոնք փորձում են խեղդել Փարիզի կոմունան՝ որպես նոր տիպի պետություն: Իսկ Թիերի (հակահեղափոխական կառավարության ղեկավար) հասցեին հայ մտածողը գրել է. «... Փարիզն առաւ, այլ ի՞նչպէս. մէկ հոյակապ մասն աւերակ, մէկ մասը ճնշուած ատելութեան և ապագայ վրէժխնդրութեան կրիւք լի, ուրիշ մեծագոյն մաս մ'ալ այն սկէպտիկեան անտարբերութեամբ՝ որ ամէն բռնութեան գլուխ ծռելու կազմ ու պատրաստ կ'երևի»[2]: Այսպիսով, Մամուրյանը Փարիզյան կոմունայի մեջ տեսել է պետության պառլամենտական ձևը, որը նոր էջ է բացել Ֆրանսիայի պետության և իրավունքի պատմության մեջ: Նա առաջիններից էր, որ Փարիզյան կոմունան արժևորեց պետական կառավարման լավագույն ձև:

Քննարկվող հարցի կապակցությամբ Ռուսինյանն արտահայտել է այն կարծիքը, որ հասարակության քաղաքական և տնտեսական ղեկավարման լավագույն ձևը պառլամենտականն է: Նրա կարծիքով, իշխանության միայն այդ ձևի պայմաններում է հնարավոր ապոհովել ամբողջ ժողովրդի մասնակցությունը երկրի ղեկավարման գործերին և օրինականություն ու արդարադատություն հաստատել նրա ներում: «Որ, իրոք, Ռուսինյանը հենց այդպես էր մտածում, դա երևում է նրա նախապատրաստած Ազգային սահմանադրությունից, որտեղ նա հայ համայնքի որպես գերագույն իշխանություն առաջադրել է ընդհանուր Երեսփոխանական ժողովը կամ պառլամենը, որին պետք է ենթակա ու հաշվետու լինի Ազգային վարչությունը, այսինք՝ կատարողական օրգանը»[3]-գրում է Ա. Թևոսյանը: Հասարակական-պետական կառուցվածքի մասին իր նման սկզբունքներով, ակնհայտ է, որ Ռուսինյանը հակադրվել է ոչ միայն ֆեոդալական պետությանը, որի պայմաններում ժողովուրդը զրկված էր երկիրը կառավարելու և պետության գործերին մասնակցելու հնարավորությունից, այլև պետության պառլամենտական-միապետական ձևին: Նրա դատողություններից հետևում է, որ նա քաղաքական-պետական իշխանության լավագույն ձև է համարել պառլամենտական դեմոկրատիան:

Միք. Նալբանդյանը իր «Հեգելը և նորա ժամանակը» աշխատությունում հեղափոխականի դիրքերից քննել է պետության ձևերը: Քանի որ խոշոր մտածողները, պրուսական բռնապետությունը համարելով կատարյալ, քննադատում էին ֆրանսիական հեղափոխությունը և նրա արդյունք հանրապետությունը, ինչպես նաև անգլիական սահմանադրական միապետական ձևերը՝ որպես անընդունելի կառավար-

[1] «Արևելյան մամուլ», 1871, հ. 5, էջ 228:
[2] «Արևելյան մամուլ», 1871, հ. 6, էջ 283:
[3] Թևոսյան Ա., Նահապետ Ռուսինյանի աշխարհայցքը, Երևան, 1970, էջ 111:

ման կառույցներ, ուստի հայ խոշոր մտածողը, հրապարակայնորեն անդրադառնալով համաշխարհային ճանաչում ստացած փիլիսոփա Հեգելի սխալներին, բազմակողմանիորեն ուսումնասիրել է անգլիական սահմանադրական միապետության առաջացման և զարգացման պատմությունում նրա գործունեության առավելությունները Գերմանական կայսրության նկատմամբ: Նալբանդյանը անգլիական և գերմանական պետությունների տարբերությունը բացատրում է մասնավորապես անգլիական պառլամենտի գոյությամբ: Անգլիայի պետական համակարգում պառլամենտի ստեղծումը, ըստ Նալբանդյանի, մեծ առաջադիմություն է, քանի որ այդ երկրում ժողովուրդը հասել է ընտրությունների կամ ազատությունների, որոնք գոյություն չունեն Գերմանիայում: «... Անգլիական մարդը իրավմամբ կարող է պարծենալ իր ազատությամբ, մինչդեռ ուրիշների և մանավանդ խեղճ ողորմելի գերմանացիք ցեխում խրված, նախանձու տրաքում են և տակավին հավան չեն Անգլիային: Տո մի նորաչափ ազատություն ձեռք բեր, հետո խոսիր»[1]: Քանի որ «Հեգելը երկրպագում էր պրուսական ինքնակալական պետությանը, նա դեմ էր ոչ միայն կառավարման սահմանադրական ձևին, այլ նաև հանրապետական ձևին», ասել է Մ. Նալբանդյանը, պառլամենտը ապականության կենտրոն է, իսկ հանրապետությունը՝ գարշելի[2]: Պատասխանելով այն հարցին, թե ինչու է Հեգելը սարսափում կառավարման այդ ձևերից, Նալբանդյանը նշել է, որ հիմնական օրենքների փոփոխությունը, հատկապես սահմանադրական օրենքներում փոփոխություններ կատարելը, պաշտոնավորների ազատումը և նշանակումը պառլամենտի կողմից զայրացրել են Հեգելին: Մ. Նալբանդյանը Հեգելին մեղադրում է այն բանում, որ նա, չուսումնասիրելով կառավարման նման ձևերի էությունը, չի փորձել տեսնել այն որակական տարբերությունը, որ գոյություն է ունեցել բռնապետության, հանրապետության և սահմանադրական միապետության կառավարման ձևերի միջև: «Բայց ինչ ասես, որ Հեգելի պես մարդը փրկություն է տեսնում ... շղթայի մեջ, քան թե այն սահմանադրության, որ միմիայն անգլիական մարդը կարողացավ իրագործել և որին հաջորդեց ուրիշ կերպարանքով... ամերիկյան դաշնակցությունը»[3]-նշում է նա: Նալբանդյանը դեմ էր Գերմանական բռնապետությանը, նրա համակրանքը սահմանադրականի կողմն էր, բայց արդյոք Նալբանդյանը համաձայն էր սահմանադրական միապետությանը՝ որպես լավագույն կառավարման ձևի: Իհարկե ո՛չ: Նրա համար այդ ձևը նույնպես անընդունելի է և ոչնչացման ենթակա. «Ով չի տեսնում, որ անգլիական սահմանադրությունը տակավին չի հասած իր վերջին կատարելիության...»[4]: Այստեղից էլ հայ մտածողը գտնում էր, որ իր կողմից «գովված» անգլիական պետության սահմանադրական կարգը պետք է ոչնչացնել, քանի որ այդ ձևը նույնպես ծանրացած է հասարակ ժողովրդի վրա: Պատմությունը ցույց է տվել, որ անգլիական սահմանադրական միապետությունը ճնշում է ոչ միայն իր ժողովրդին, այլ նաև շատ հեռվում գտնվող Ամերիկայի աշխատավորությանը: Այդ «ազատամիտ» Անգլիան, գրում է Նալբանդյանը, բռնակալի գավազանով ձգտում էր կանխել Ամերիկայի գյուղացիության պայքարը ստրկատիրությունից ազատվելու համար: «Տարակույս չկայ, որ կգա օր, երբ այդ անդրանիկական համակարգությունը կընկնի և դրանով հողը դուրս կգա կապանքի տակից, բայց այդ ժամանակ արդյոք բոլորովին կատարյալ կլինի նոր կար-

[1] **Նալբանդյան Մ.,** ԵԼԺ, հ. 3-րդ, էջ 306-307:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 310:
[4] Նույն տեղում:

գը Անգլիայում»[1]: Այսպիսով Նալբանդյանն իր հայացքն ուղղում է դեպի կառավարման հանրապետական ձևը: Բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա դեմ էր նաև գոյություն ունեցող հանրապետական ձևին այնքանով, որքանով որ դրանք նույնպես չէին ծառայում ժողովրդին և նրա շահերին: Ըստ Նալբանդյանի՝ հանրապետությունները ցանկացած ժամանակ կարող են ստանալ հետադիմական, հակաժողովրդական տեսք: Նալբանդյանի այս գաղափարները հենվել են Ֆրանսիայի հանրապետության փորձի վրա, քանի որ «վերստին կործանվեցավ այնտեղ (Ֆրանսիայում) ազատության աթոռը, և նորա ավերակների վրա բռնապետը մեկնեց իր երկաթը»[2], «ավելին ֆրանսիական հանրապետության երևացուցիչը մի անհատ է՝ պոլիտիկական ավազակի կերպարանքով»[3]:

Այսպիսով, եթե հանրաճանաչ Հեգելի դիալեկտիկան ավարտվում է Պրուսական միապետության կատարյալության ընդունումով, ապա Նալբանդյանի դիալեկտիկան պետության կառավարման այս կամ այն ձևի կատարյալություն չի վերագրում, քանի դեռ պետությունը չի դարձել ժողովրդավարական:

Միք. Նալբանդյանի ստեղծագործություններում խոսքը ոչ միայն պետության կառավարման ձևերի, հեգելյան պատկերացումների և ժողովրդի շահերին համապատասխանող ձևի մասին է, այլև՝ թե ինչ ուժերի ազդեցությամբ է պետության կառավարման մեկ ձևը փոխվում մյուսով: Հայ մտածողի կարծիքով, այդ փոփոխությունները կատարվում են միայն տվյալ երկրի ներքին և արտաքին կյանքի ազդեցության շնորհիվ: «... Հեղափոխություններից հետո այդ երկու աշխարհների (Ֆրանսիայի և Անգլիայի- Ն. Հ.) պաշտոնքը փոփոխվեցան»[4],- գրում է Նալբանդյանը: Կամ՝ Անգլիական միապետությանը փոխարինում է սահմանադրականը, որ կատարվեց ոչ թե թագավորի հայեցողությամբ, այլ բուն անգլիական կյանքով: Նա, անդրադառնալով միապետության բնորոշմանը, ընդգծում է, որ միապետությունում (Գերմանիա) ամբողջ իշխանությունը պատկանում է մի անձի, սահմանադրականում (Անգլիա) իշխանությունը բաժանված է թագավորի և ներկայացուցչական մարմնի միջև, իսկ հանրապետությունում (ԱՄՆ) իշխանությունը իրականացվում է ընտրովի մարմինների միջոցով:

Նշված հարցը նույնպես գիտական լուծում է ստացել Հ. Սվաճյանի աշխատություններում, որոնցում հեղինակը ցույց է տվել, որ պետության կառավարման ձևերը բաժանվում են չորսի՝ բռնապետություն, միապետություն, սահմանադրական միապետություն և հանրապետություն: «Կառավարական այս չորս ձևերը երկու գլխաւոր տիպար ունին, որք են Միապետութիւնը՝ ուր իշխանութիւնը ժառանգական միապետի մը ձեռքն է, Հասարակապետութիւնը՝ ուր իշխանութիւնը բոլոր քաղաքացւոյ կը վերաբերվի կամ ուղղակի և, կամ երեսփոխաններու միջամտութեամբ»[5]-նշում է Հ. Սվաճյանը:

Ստ. Նազարյանի ապրած ժամանակաշրջանում պետության կառավարման բոլոր ձևերը առկա էին: Նա պաշտպանում է սահմանադրական-պառլամենտական միապետության գաղափարները: Աշխարհի երկրներում հանդես են գալիս «միապետություն, ազնվապետություն և ժողովրդավարություն»[6]: Սակայն, նրա կարծիքով,

---

[1] Նույն տեղում, էջ 113:
[2] Նույն տեղում, էջ 312:
[3] **Նալբանդյան Մ.,** Երկրագործություն ..., էջ 43:
[4] Նույն տեղում, էջ 312:
[5] «Արևելյան մամուլ», 1881, հ. 8, էջ 297:
[6] **Նազարյան Ս.,** Երկեր, հ. 1, էջ 88:

ժողովրդի համար կարևոր են սահմանադրականը և միապետականը՝ առանց բռնապետական ձգտումների ու քաղաքականության: Բայց ճանաչված մանկավարժը դրական է խոսում ռուսական կայսրության մասին հատկապես այն պատճառով, որ նա Արևելյան Հայաստանը ազատագրեց պարսկական բռնապետական երկրից և իր 1836 թ. կանոնադրությամբ հնարավորություն ստեղծեց էջմիածնին իր շուրջը համախմբել հայերին՝ զարգացնելու Հայաստանը:

Հանրահայտ է, որ ժամանակին եվրոպական և ռուսական իրականություններում լայն տարածում էր ստացել «Լուսավորյալ միապետություն», «Լուսավորյալ միապետ» գաղափարախոսությունը, որի նպատակն էր արդարացնել գոյություն ունեցող միապետական կարգերը՝ փորձելով հաստատել, որ «Լուսավորյալ միապետը» բարեփոխումների միջոցով կարող է իրականացնել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են մարդկային հասարակությանը: Ստ. Նազարյանը, Սպ. Սպանդարյանը և ուրիշները գովերգել են միապետական կարգերը հենց լուսավորյալ միապետի տեսանկյունից: Նազարյանը գովաբանել է Ալեքսանդր II կայսերը՝ որպես Ռուսաստանը շենացնող և ամրապնդող միապետի:

Հակադրվելով Նազարյանին՝ Նալբանդյանը գտնում էր, որ Ռուսաստանում, Եվրոպայում և Ասիայում չեն եղել և չէին կարող լինել լուսավորյալ միապետներ: Այդ պատճառով էլ նա Գերցենի գաղափարախոսության ազդեցության տակ բոլոր ազգությունների խնդիրը համարել է պայքարը բռնապետության, այսպես կոչված՝ «լուսավորյալ միապետների» դեմ՝ նրանց տապալելու համար: Ժողովուրդն է միայն, որ կարող է դեմ գնալ «լուսավոր բռնակալության, եթե միայն բռնակալությունը կարող է լուսավորել, կամ լուսավորելուց հետո հարատևել իբրև բռնակալություն ...»[1],- գրել է Նալբանդյանը: Իր ժամանակի պետությունների հետադիմական էությունն ընկալելու միջոցով հայ հեղափոխականը չի տեսել «լուսավորյալ» եվրոպական և «խավարամոլ» ասիական բռնակալական պետություններ: Այսինքն՝ «լուսավորյալ միապետներ» հասկացությունը ավատատիրական իրականությունում խաբեություն է, միապետությունը, անկախ երևան գալու ժամանակից և երկրից, Նալբանդյանի բնորոշմամբ, հակաժողովրդական և բռնակալական քաղաքական համակարգ է, որը առաջին հերթին վերաբերում է թուրքական բարբարոս պետությանը: Սակայն հայ իրականության մեջ եղել են հեղինակներ, որոնք անսահման հայրենասեր ու ազգասեր Նալբանդյանին մեղադրել են թուրքական բռնակալությունը պաշտպանելու մեջ: Այս տեսակետն են պաշտպանել 1862 թ. Թիֆլիսում հրապարակվող «Կռունկ հայոց աշխարհի» հանդեսը, 1916 թ. «Հորիզոն» ազգային թերթը, բուրժուական գաղափարակիր Բերունին: Ճշմարտությունից զուրկ այդ տեսակետները փաստորեն ուղղված են եղել Նալբանդյանի հեղափոխական հայցքների դեմ, հայացքներ, որոնցում Նալբանդյանը դատապարտել է նաև թուրքական բռնակալությանը, նշելով, որ այնտեղ «առաջ քրիստոնայաք կկողոպոտվին, կմերկանան և կմեռնին, իսկ հետո թուրքը»[2]: Հայ հեղափոխականը հայ, թուրք և մյուս ազգություններին հավասարապես կոչ է արել տապալել թուրքական հակաժողովրդական տիրապետությունը: Թուրքիան մի տերություն էր, որն անմիջապես շփվում էր եվրոպական երկրների հետ և առևտրական կապեր էր հաստատել նրանց հետ: Եվրոպական հեղափոխական շարժումների ալիքը հասավ տնտեսապես հետամնաց Թուրքիային, որտեղ սոցիալական ծանր պայմաններում էին և՛ աշխատավոր ժողովուրդը, և՛ ազգային փոքրամասնություն-

[1] **Նալբանդյան Մ.,** Երկրագործություն..., էջ 96:
[2] **Նալբանդյան Մ.,** նշված աշխատությունը, էջ 60:

ները: «Մշակ» թերթը հաղորդել է, որ Թուրքիան ձևական քայլեր է կատարել միապետությունից սահմանադրականի անցնելու համար: Դրա իրականացման նպատակով 1876 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիան ընդունել է Սահմանադրություն, որով պետությունը հրապարակայնորեն երաշխավորում է հպատակների ազատությունը և հավասարությունը օրենքի առջև: Ձևականություններով հարուստ սահմանադրությունով բռնապետությունը տերության մեջ ապրող բոլոր հպատակներին, անկախ ազգությունից և դավանանքից, հայտարարեց օսման, իսկ պետական լեզուն՝ թուրքերենը: Այդ պատճառով էլ իր հոդվածներում նա հորդորում էր հայերին չխաբվել սահմանադրական միապետության փշրանքներով և պատրաստ լինել իրենց կյանքը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում: «Մենք չենք կարող հավատալ, որ մի երկիր, որը բնակեցված է ոչ թե միակերպ ազգաբնակչությունից, այլ ամեն տեսակ միմյանց մեջ հակադիր, թշնամական ազգություններից և ցեղերից, ընտելանար կառավարության սահմանադրական ձևին, նամանավանդ, որ այդ ազգերի մեծ մասը ... տգիտությունից մինչև անգամ բարբարոսության և վայրենիության դրությունից հանկարծ ստիպված են անցնել «լուսավորված» երկրների սահմանադրական կյանքին»[1]:

Այսպիսով, 19-րդ դարի հայ մտածողների գաղափարները պետության ձևի վերաբերյալ աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն նրանք բոլորը հանդես են եկել բռնապետության քննադատությամբ և կարևորել են պետական կառավարման այնպիսի ձևը, որտեղ ժողովուրդն իր ներկայացուցիչների միջոցով կարող է որոշակի մասնակցություն ունենալ պետության կառավարմանը:

ВЗГЛЯДЫ АРМЯНСКИХ МЫСЛИТЕЛЕЙ XIX ВЕКА О ФОРМЕ ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ

Нелли Овсепян
Соискатель института философии, социологии и права Национальной академии наук РА

В 19-ом веке борьба против диктатуры была на первом плане. Армянские мыслители А. Свачян, М. Мамурян, М. Татинян, Н. Русинян, М. Налбандян также выразили свои взгляды о формах правления государством. Они критиковали авторитарные формы правления и наилучшей формой правления государством считали ту, где народ через своих представителей участвует в управлении делами государства. А. Свачян считал, что наилучшей формой правления является парламентарная республика. М. Мамурян считал приемлемым конституционно-парламентскую форму правления. М. Налбандян наилучшей формой правления государством считал республику, однако не считал ту или иную форму правления совершенной, пока государство не станет воистину демократическим.

[1] «Մշակ», 1877, h. 18, 14 մարտի:

VIEWS OF ARMENIAN THINKERS OF 19th CENTURY ON STATE GOVERMENT FORMS

Nelly Hovsepyan
RA National Academy of Sciences, A research applicant at the Institute of Philosophy, Sociology and Law

In the 19th century struggle against dictatorship was on the 1st plan. Armenian thinkers didn't overlook this issue and they express their thoughts about forms of state government too. They criticized the authoritarian forms of government and express their ideas about the best forms of state government. Y. Svachyan, M. Mamuryan, M. Tatinyan, N. Rusinyan, M. Nalbandyan and others spoke about monarchical and republican forms of state government. They criticized authoritarian form of govermnent and the best form of state government for them is one where population participates in managing state affairs.

Svachyan consider parliamentary republic as the best form of state government. Mamuryan considered acceptable constitutional parliamentary regime. He considered Paris Commune Republican form of government which opened a new page in history of France. Mik. Nalbandyan considered republic the best form of state government, but didn't consider perfect this or that form of government as long as the state doesn't become truly democratic.

Բանալի բառեր – *պետության կառավարման ձև, հանրապետություն, միապետություն, պառլամենտ, Փարիզյան կոմունա, բռնապետություն, լուսավորյալ միապետ*
Ключевые слова – *форма правления государством, республика, монархия, парламент, Парижская коммуна, деспотия, просвещенный монарх*
Key words – *the form of state government, republic, monarchy, parlament, commune of Paris, despotism, enlightened monarch*